ծով զօգուտ գործառնութեանս, յուսամ յԱստուած զուարճասջիք մեծաւ շնորհակալութեամբ և բերկրեսջիք անպատում խնդութեամբ ի հոգի և ի մարմին ընդ քրիստոսապսակ պաուական գլխով մերով, որում ընդ ձեօք տացէ տէր Աստուած կեանս և խաղաղականս յաջողութեամբ և բարեբախտութեամբ ի ցնծութիւն մեր և ի պարծանս Հայկազեան սեռիս.

Մնամ վասն ընդհանրական կառավարութեան Ձերոյ ըստ ամենայնի հնազանդ ծաղկաբար Իսահակ Նուաստ եպիսկոպոս Մահտէսի տէր Գրիգորեան Երևանցի։

№ 8
1837 փետրվարի 12
ի Սենեակն իմ

II

Սրբազան Սիւնհոդոսի գերագահ Մայր Աթոռոյ կաթողիկէ էջմիածնի. ի ծաղկազարդ Իսահակ եպիսկոպոսէ Մահտեսի տէր Գրիգորեան Երևանցւոյ։

Ամենախոնարհ խնդիր։

1837 ներկայ թուոջն ի 12 փետրվարի 8 համարաւ խնդրամատոյց եղէ գրաւորութեամբ սրբազան Սիւնհոդոսիդ վասն հրամայելոյ իմում նուաստութեան յօրինել նոր ինորոյ զգործարանս թղթահանութեան դիւրին ձևով. ըստ որում պլան սոյն գործարանիս ունիմ պատրաստի ի ձեռս, նրմանապէս զպատաշ ասացեալ սպիտակ աղն զնշշտայն և զայլ հարկաւոր պիտանացու իրս, ի նուաստութենէս յօրինեալս. որպէս օգտաւետութիւնք սոցա ցուցանէն ի նախկին գրութիւնէս, զի նիւթք սոցա են դիւրագին, բայց ինքեանք ծանրագին։

Քանզի՝ մինչև ցայսօր կամ անբավական ի խնդրագրոյս և սպասու Ձերում հրամանի, ահա ժամանակն է արդէն դնելոյ ի գործ և սկսելոյ զպլան սոյն գործարանիս. կամ միւս դեղորայքն՝ որ առաւել ևս են հարկաւորք (ծաներուք և տեսեք.) որոց ժամանակն յօրինելոյ, այս 3 ամիսն է, որոց մինն էանց. եթէ 2 ամիսն ևս անցանի, որ ջերմային աւուրքն են, սոքա այլ ոչ ևս յառաջ գան և տարին բոլոր՝ զուր անցանի, ի վերա մեր. թէ պատաշն թէ նշշտայն, սոնպէս միւս դեղորայքն են։

Վասնորոյ խնդրեմ խոնարհաբար եթէ կամք Ձեր բարեհաճին մերում խնդրոյ՝ չյապեցուցանել ևս յայս նուագ իբրև զառաջինն պատասխան սոյն գրոյս։

Այլ և խնդրեմ խոնարհաբար զՁենջ վասն կապուտակ և կանաչագույն քարանցն լաջիվարդի, որ ասի բաղաշխի, որ գտանին սոքա ի պղնձահանքին Երևանայ. թէև այժմ ոչ բանի մատէնն նորայ, սակայն գիտեմ հաւաստեաւ, որոց ջուհարն կուտակեալ կան ի հին ժամանակէ մերձ առ մատէնն պղնձահանքի, որոյ օգուտն տեսեալ եմք՝ ևս ծառայ Ձեր, յաւուրս լուսահոգի Հայրապետին Եփրեմայ բազմաւ աշխատութեամբ իմով՝ շահեցի սրբազան Տեառն իմոյ և շահեցա ի նորին սուրբ օծութենէն. վասն որոյ՝ ասեմ մին լաւ բնագէտ կարիչ թուանկչի, հանդերձ ամենայն պարագաիւք, և քանի մի թուման վասն ծախուց նորին, տուք ինձ և առ աղա Մատթէոսն Մէլիք Աբրահամեանն Մէլիք Աղամալեանց, գրեցէք որ ինքն ևս՝ իւր սպասաւորքն դա ընդ իս ի մատէնն իւրեանց՝ յաղագս ցուցց տալոյ զտեղիս մատէնին—զնամ որոնէմ ի մեջ կուտակացն այնր ջևհերին պղնձոյ—Տեսէք յայնժամ ողորմութեամբն Աստուծոյ թէ քանի՞ օգտաւէտ բանս բերալ ընծայեմ Ձերում սրբութեանն, օգուտ և պարծանք Սրբոյ Աթոռոյս և մեզ և այլն։

Ծաներուք և տեսեք.

Հաւատացէք Աստուած կենդանին, քանի որ տեսանում եմ զկոտորակն թղթոց ցիր և ցան թափեալ աստ և անդ, այնպէս եմ համարում թէ իմ շորերն են հանեալ թափեալ աստ և անդ. հրամայեցէք ինձ ևս ըստ նմանութեան պարոն Յովսէփ Տուլայովին, որ նա իւր մատացածին բանքն՝ օգուտ տէրութեան և Ձեր ևս ցուցանէ, և վասն այնր՝ ընկալնու նա բազում շնորհակալութիւն հանդերձ պարգևօք։

Եթէ մինն ոչ կորուսանեմք վասն տասին, տասն ի միասին որ գտանեմք. 1817 ամին մինչ լաւն յօրինեցի լաջվարդ, գրեցի այս բանն ի վերա նորա. Զառն դատրի՝ զարկեար բիլբր. որ նորին սուրբ օծութիւնն ուրախացեալ ի վերա այսր բանին, շնորհեաց ինձ ոսկեայ տուի մի մինալու և 5 եալտուզ ոսկի, վասն որոյ՝ եռու պղնձա-